



124. Ա՛ ՀՆԳԸՆՐ, ԲԵՂԸՏ ՀԱՌՐԵ

Շահ-Աբրաան ըսկանում ա, վրեր ուրան երգչիրումն էսհինչ տընդն իրեք կյող կա, հինչ անում ըն, անում չըն, տահանց կարում չըն փրոնընն։ Շահ-Աբրասը մըհետ շորերը փոխում ա, քյինամ տոնա կյամ էն քաղաքը, վըերդեղ էտ կյողերն ըն ապրում։ Քյինամ ա տահանց քթենոնմ, հըրցընում, թա ինձ ծընդ հնդեր չը՞ք անըել։ Տահանք հըրցընում ըն, թա հինչ փիշա՞կու տար ըս, Շահ-Աբրասը թա՝ վըեչ մին պեն ծընոքավըս կյամ չի, մենակ վըեր բեղերըս հլնրեմ, կախաղանու յիրա յէլ մարթ ինի, պեց կըթողեն։ Տահանք էլ թա՝ էտ լնվ փիշակ ա, մընդ իտի մարթ ա հարկավըեր։ Շահ-Աբրասը տահանց անա հըրցընում ա, թա՝ պա տո՞ւք հինչ փիշակու տար ըք, տըհանցա մինը թա՝ ես ամմընն դուշու, ամմընն հիլվանու, ամմընն կյենթանու լոնդի գյոնդում ըմ, հինչ էլ վըեր ասընն, կլոխ կինգյիմ։ էն մինն էլ ասում ա.—Վըեր հիշքան պըննդ քըլլած տուներ ինի, իմ ըռաչիս պենվում ըն։ էն մին կյողն էլ ասում ա.—Ծա լնվ մարթ ճինանչող ըմ, վըեր հանրոն տարն առաչ էլ մին տընդ տըեսած ինիմ, կըգյիղամ հու վա։

Տահանք պայման ըն կապում, թա քյինամ ընք Շահ-Աբրասեն կաքը կտրենքլ։ Հղե յըն ինոնմ, քյինամ։ Վըեր հսնում ըն Շահ-Աբրասեն ամարաթը, դըրըզան մոտանում, մին քանի շան

Թուլեքի բիրանդի հանձնում ըն, մարն էլ մեհեստ համփ ա անում, Թուլեքը սուա ըն անում: Եահ-Աբբասն ասում ա.— Էս լավ տըն-
ուա՛մ, հալա՛ էտ ամսընն հիյվանու, ղուշու լուզի գլնդողնն հըր-
ցընեմ, տընսնամ էս շնիրեն լնդին գլնդողնում ա՛: Տրան վըեր հըր-
ցընում ա, Թա էն շան Թուլեքը նան ուրանց մարը հինշ խոսըեցին,
նա Թա՝ Թուլեքը ըստըեղաս-ընդեղան ըսեցեն կլողեր ըն կլամ
խազնան տանեն, նահանց քավթառ մարը յիրա՛ն պրծավ, Թա՝ ծի-
նըրնեմ կտըեցեք, տարը նհըտնեն ա: Եահ-Աբբասը մոկումը Թա՝
պա՛, էս շնիրեն լնդին գլնդաց:

Տրանա ետը նի յըն մննում խըզնատոնը, քիլիղնեն լոխ ու-
րանք-ուրանց պեց ըն իննում:

Խազնան տանում ըն մին հեռու տըեղ շորս փայ անում, Եահ-
Աբբասն էլ ուրան փայը յոր ա օնում, ետ տըեռնում, քիլնամ ու-
րան պալատը, մին քանի մարթ՝ ճոկում, տահանց ասում քիցեք
էսհինշ քաղաքումը, էսհինշ տըեղն իրեք կլողեր ըն ապրում, փրո-
նեցեք, պերեք կախաղանեն կոշտը, մինշև վըեր ես կլամվուշ,
կախ յի տաք:

Տահանք քիլնամ ըն էտ կլողըերեն փոնում, պիրոն կախաղա-
նեն կոշտը, ժուղովուրթը հվաքում, էնքան կենում, վըեր Եահ-
Աբբասը կլա:

Եահ-Աբբասը փըյտոնավ կլամ ա, լոխ հղե յըն տամ, կլո-
ղերն էլ ուրանք-ուրանց մաշին Թա՝ պա էս հինշ ա՛նենք, սրանա
յըլ նըեղ տըեղ յի ինիլ, էն մարթ՝ ճինանշող հնգըերը Թա՝ ծինըր-
նեմ կտըեցեք, ըրիւրյին կացեք, հանե մըեր հնգըերը փըյտոնավ
կլամ ա, մըեղ ըզըզըլական ա: Եահ-Աբբասը վըեր ուրան շուրե-
րավը, ուրան զենքերը կապած, Թագը կլիւրեն փըյտոնավը մու-
տանում ա, էն մարթ՝ ճինանշող կլողը ծեն ա տամ, ասում.— Ա՛
հնգըեր, սրանա յեւ նըեղ տըեղ յի ինիլ, մին բեղըտ հլոթե, մըեղ
էս խըթան ըզադե: Եահ-Աբբասը քթըն տակեն ծիծանղում ա, բեղը
հլոթում, տահանց պեց ըն Թողում, կլամ ըն Եահ-Աբբասեն կոշ-
տը, տա Թա՝ վըեսկեն ծըեղ հալալ ինի, քիցեք, օրաս ետը ըխշը-
դեցեք, ըպըեցեք, էլ կլուղոթում շանեք:

